

## ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկման մեթոդաբանությունը

2023 թվականի ապրիլի 1-ից ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարները ազատականացվել են՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը՝ հաճախորդներին առաջարկելու սեփական մոդելի հիման վրա գին-որակ համադրությամբ ծառայություններ:

ԱՊՊԱ գծով ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Ապահովագրավճար} = \text{Բազային ապահովագրավճար} \times \text{Բոնուս-Մալուս գործակից} \times \text{Պայմանագրի ժամկետից կախված կարգավորիչ գործակից}$$

$$\text{Բազային ապահովագրավճար} = \text{Հիմնական ապահովագրավճար} \times \text{Ռիսկայնության գործակիցներ}$$

Տարեկան առավելագույն սահմանաչափ	
Հիմնական ապահովագրավճար	41,000 ՀՀ դրամ
Բազային ապահովագրավճար	102,500 ՀՀ դրամ

**Բոնուս-Մալուս գործակցի** հաշվարկման կարգին և Բոնուս-Մալուս դասերին տրվող գործակիցների չափերին կարող եք ծանոթանալ **Բյուրոյի կայքի «Բոնուս-Մալուս»** բաժնում, ինչպես նաև «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոններում:

**Պայմանագրի ժամկետից կախված կարգավորիչ գործակիցների** վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել **ապահովագրական ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում**:

Յուրաքանչյուր ապահովագրական ընկերության կողմից կիրառվող ԱՊՊԱ ապահովագրավճարի առնչությամբ ստորև տեղեկատվությունը կարող եք գտնել **ապահովագրական ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում**՝

- հիմնական և բազային ԱՊՊԱ ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն չափեր,
- ռիսկայնության գործոններ,

- ԱՊՊԱ պայմանագրի ժամկետից կախված կիրառվող կարգավորիչ գործակիցներ,
- ԱՊՊԱ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորություններ,
- ԱՊՊԱ ապահովագրավճարի էլեկտրոնային հաշվիչ: